



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 7

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. «ԲԱՐՄԱՔ» ՍՊԸ-ին աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը վերապահելու մասին:
2. Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2004 թվականի մարտի 26-ի թիվ 3/11 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 55 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5. Չարենցավանի համայնքապետարանի, Չարենցավան համայնքի «Մշակույթ», Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» և «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին:
6. Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները հաստատելու մասին:
7. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:
8. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
10. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2020 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման մասին:
11. Չարենցավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:


12. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
13. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
14. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության ու կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
15. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվությամբ եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 9

դեմ-0

ձեռնպահ-0

Բարսյան Նարեկ



Բարսյան Վալերի



Գասպարյան Անատոլի




Գասպարյան Մելիք




Խլղաթյան Արսեն



Սահակյան Երեն



Վարդանյան Նորայր



Վարդանյան Սարգիս



Փանոսյան Արթուր



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 8

«ԲԱՐՄԱՔ» ՍՊԸ-ԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

- Վերապահել **«ԲԱՐՄԱՔ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշվին:
- Պահանջել **«ԲԱՐՄԱՔ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ներկայացնել համայնքի ղեկավարին ամսական հաշվետվություն՝ աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ - 9

դեմ-0

ձեռնպահ-0

- Բաբայան Նարեկ
- Բաբայան Վալերի
- Գասպարյան Անատոլի
- Գասպարյան Մելիք
- Խլղաթյան Արսեն
- Սահակյան Երեմ
- Վարդանյան Նորայր
- Վարդանյան Սարգիս
- Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 9

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Սահմանդրության 182-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Սահմանել սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ- 9

դեմ-0

ձեռնպահ-0

Բարայան Նարեկ

Բարայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ



**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգով սահմանվում են Չարենցավան համայնքի (այսուհետ՝ համայնքի) կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը:

2. Համայնքի կամավոր խնդիրները ուղղակիորեն պայմանավորված չեն համայնքային կյանքի բնականոն ընթացքի հետ: Դրանք կարող են իրականացվել միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների իրականացման համար համայնքի բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների չափը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

4. Այն դեպքում, երբ կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի կողմից սեփական լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

5. Համայնքի կամավոր խնդիրներ են սահմանվում՝

1) բազմաբնակարան շենքերի և հասարակական շինությունների պահպանումը

2) պետական ենթակայության շինությունների, օբյեկտների, տարածքների և ենթակռուցվածքների պահպանման և վերանորոգման աջակցությունը

3) բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին ֆինանսական աջակցության տրամադրումը

4) թափառող կենդանիների (շների) վնասագերծման և ստերջացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը.

5) կացության դժվարին պայմաններում հայտնված, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցությունը.

6) համայնքի բնակիչ հանդիսացող, ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներին աջակցությունը:

7) համայնքի բնակիչ հանդիսացող, պատերազմական իրավիճակում ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած ազատամարտիկներին աջակցությունը

8) տարերային և տեխնաժին վտանգով պայմանավորված աղետների ու տնտեսական ցնցումների դեպքում բնակչությանն անհետաձգելի օգնության տրամադրումը

6. Որպես համայնքի կամավոր այլ խնդիր ավագանու կողմից սահմանելու համար առաջարկություն կարող են ներկայացնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:
8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանելու առաջարկությունը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:
9. Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի սեփական լիազորություններն են՝
- 1) ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին՝ ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխան, համայնքի ղեկավարին կից սոցիալական աջակցության մշտական հանձնաժողով:
 - 2) սոցիալական աջակցության մշտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան, որոշում է կայացնում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ:
 - 3) սահմանված կարգով ընթացք է տալիս սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված նախաձեռնություններին:
10. Սույն կարգի 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի որոշմամբ սոցիալական աջակցությունը տրամադրվում է մինչև 30 000 (երեսուն հազար) դրամի չափով, 5-րդ կետի 7-րդ ենթակետերով՝ 100.000 (հարյուր հազար) դրամի չափով:
11. Բացառիկ դեպքերում՝ արտակարգ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ, առողջական և սոցիալական խնդիրներով պայմանավորված, սոցիալական աջակցության մշտական հանձնաժողովի հատուկ եզրակացության հիման վրա՝ նախագահի ներկայացմամբ, ավագանու որոշմամբ կարող է տրամադրվել մինչև 200 000 (երկու հարյուր հազար) դրամի չափով աջակցություն:
12. Դրամական աջակցություն ցուցաբերելու դեպքում գումարը տրամադրվում է անկանխիկ՝ համապատասխան բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
13. Սոցիալական աջակցություն կարող է տրամադրվել նաև ոչ դրամական ձևով:
14. Մեկ բյուջետային տարվա ընթացքում միևնույն անձը (ընտանիքը) սոցիալական աջակցությունից կարող է առավելագույնը երեք անգամ:
15. Սոցիալական աջակցությունից չեն կարող օգտվել Չարենցավան համայնքի բնակիչ չհանդիսացող քաղաքացիները:

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ



1. Համայնքի ղեկավարը ստեղծում է Չարենցավան համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով բաղկացած է հինգ անդամից (այսուհետ՝ հանձնաժողով):
2. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:
3. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան: Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:
4. Չարենցավան համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և ՀՈԱԿ-ների տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.
 - 1) համայնքի բնակիչները,
 - 2) հասարակական կազմակերպությունները,
 - 3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:
6. Դիմումին կամ գրությանը կցվում են սոցիալական վիճակը հավաստող փաստաթղթեր:
7. Դիմումները կամ գրությունները՝ ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:
8. Նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին կամ գրությանը տրվում է համապատասխան ընթացք ըստ նպատակահարմարության (անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, տունայցի կատարում, կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Տունայց կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրություն:
10. Աշխատանքային խումբը այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը /Ձև 1/:

11. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:
12. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):
13. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելու օրվանից ետոյա ժամկետում, աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:
14. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:
15. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:
16. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:
17. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:
18. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

19. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.
 - 1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
 - 2) միայնակ մայր - 1 միավոր,
 - 3) ամուսնալուծված ընտանիք - 1 միավոր,
 - 4) բազմանդամ ընտանիք - 1 միավոր,
 - 5) բանակում զինվոր - 2 միավոր (1 միավոր՝ պոտենցիալ ֆինանսական աղքյուրի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
 - 6) ընտանիքի անդամի 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
 - 7) բնակվում են վարձով կամ վագոն-տնակում - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
 - 8) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք -3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
 - 9) ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
 - 10) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհվածի (անհետ կորածի) կամ ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած անձի ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
 - 11) միայնակ թոշակառու - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
 - 12) անբարենպաստ այլ պայմաններ - 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

20. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 5 միավոր ստանալու դեպքում:
21. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեյում մշտապես բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը:

ԸՆՏԱՆԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

22. Ընտանիքի գնահատման փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմումը կամ գրությունը.
- 2) դիմողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.
- 3) ընտանիքի կամ նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.
- 4) ընտանիքի գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.

23. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:

24. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում աշխատակազմի կնիքով:

ԸՆՏԱՆԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնք

«---»-----20---թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն -----

Հասցե -----

Հեռախոս -----

Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

Անուն, ազգանուն, հայրանուն	Կարգավիճակ	Ծննդյան օր, ամիս, տարի

Ընտանիքի իրավիճակը

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	
Կոմունալ-կենցաղային պայմաններ	
Սանիտարա- հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով ապահովվածություն	
Եկամուտներ	
Հազուստով ապահովվածություն	
Սննդով	

ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	


Ընտանիքի սոցիալական կապերը

Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք	
տվյալներ	կարգավիճակ

Լրացուցիչ տեղեկատվություն

Մասնագետի դիտարկումներ

Լուսանկարների առկայություն



Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

N	Չափորոշիչ	Չափորոշիչի համար սահմանված միավորը	Ընտանիքի ստացած միավորը
1	Նպաստառու ընտանիք	1	
2	Միայնակ մայր	1	
3	Ամուսնալուծված ընտանիք	1	
4	Բազմանդամ ընտանիք	1	
5	Բանակում զինվոր	2	
6	1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամ	2	
7	Բնակվում են վարձով կամ վագոն-տնակում	3	
8	Արտակարգ իրավիճակից տուժած ընտանիք	3	
9	Ընտանիքի անդամի մահվան դեպք	2	
10	Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհվածի (անհետ կորածի) կամ ուղղակի գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած անձի ընտանիք	2	
11	Միայնակ թոշակառու	2	
12	Այլ անբարենպաստ պայմաններ	5	
ԸՆԴԱՄԵՆԸ			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 10

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ 3/11
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 21.02.2020 թվականի 01/04.1/09059-20՝ գրությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2004 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 3/11 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
 - 1.1 Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրության 2-րդ կետի 2.4 ենթակետը լրացնել նոր տողով՝ «**համայնքային նշանակության ոչ տարանցիկ ճանապարհների սալապատման, խճապատման երթևկելի մասի և մայթերի բարեկարգման աշխատանքներ**»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9

դեմ-0

ձեռնպահ-0

Բարայան Նարեկ

Բարայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 11

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 55 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 55 որոշման 7-րդ հավելվածը (Չարենցավան համայնքի **«Արզական գյուղի մանկապարտեզ»** ՀՈԱԿ-ի 2021թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը) լրացնել 12-րդ տողով՝ «Լվացարար» և 13-րդ տողով՝ «Խոհարարի օգնական» հաստիքային անվանումներով:

12.	Լվացարար	-	--	0.5	44850-46350	0	0	46350
13.	Խոհարարի օգնական	-	-	0.5	44850-46350	0	0	46350

2. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 55 որոշման 14-րդ հավելվածը (Չարենցավան համայնքի **Արզական գյուղի «Արվեստի դպրոց»** ՀՈԱԿ-ի 2021թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը) լրացնել 7-րդ տողով՝ «Գործավար» հաստիքային անվանումով:

7.	Գործավար	-	-	1	89700-92700	0	0	92700
----	----------	---	---	---	-------------	---	---	-------

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ- 9

դեմ-0

ձեռնպահ-0

Բարայան Նարեկ



Բարայան Վալերի




Գասպարյան Անատոլի




Գասպարյան Մելիք



Խլղաթյան Արսեն



Սահակյան Երեմ



Վարդանյան Նորայր



Վարդանյան Սարգիս




Փանոսյան Արթուր



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



Վ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ



 ՀԱՎԵԼՎԱԾ N 2
 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՆ
 «ՀԱՎԵԼՎԱԾ N 14
 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 55 ՈՐՈՇՄԱՆ

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ «ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի 2021Թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 15

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորներ	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	«Արզական գյուղի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ	Տնօրեն	-		1	150000			150000
2		Հաշվապահ	-		1	116000			116000
3		Գեղմասվար-գրադարանավար			1	95000			95000
4		Ուսուցիչ			9	89700-92700			834300
5		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման		1	89700-92700			92700
6		Օժանդակ բանվոր	Տեխնիկական սպասարկման		1	89700-92700			92700
7		Գործավար	Տեխնիկական սպասարկման		1	89700-92700			92700
	Ընդամենը				15				1473400

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ 11
 ՈՐՈՇՄԱՆ
 «ՀԱՎԵԼՎԱԾ N 7
 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ
 55 ՈՐՈՇՄԱՆ



ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ ՀՈԱԿ-Ի 2021Թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴԻՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
 2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Կարգա- կերպու- թյան նշանակ	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագի- րը	Հաստիքայ ին միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելա- վճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	«Արզական գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Տնօրեն	-		1	150000			150000
2		Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ			1	116000			116000
3		Հաշվապահ	-		1	116000			116000
4		Դաստիարակ			3	99000			297000
5		Դաստիարակի օգնական			3	89700-92700			278100
6		Երաժշտության դաստիարակ			1	99000			99000
7		Բուժքույր	Տեխնիկական		1	89700-92700			92700
8		Տնտեսվար	Տեխնիկական		1	89700-92700			92700
9		Խոհարար	Տեխնիկական սպասարկման		1	89700-92700			92700
10		Փականագործ-էլեկտրոմոնտյոր	Տեխնիկական սպասարկման		1	89700-92700			92700
11		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման		1	89700-92700			92700
12		Լվացարար	Տեխնիկական սպասարկման		0,5	44850-46350			46350
13		Խոհարարի օգնական	Տեխնիկական սպասարկման		0,5	44850-46351			46350
	Ընդամենը				16				1612300



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 12

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹ»,
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՔՈՒՐ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ» ԵՎ «ԱԼԱՓԱՐՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, դրույթներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.










1. **Չարենցավանի համայնքապետարանի** 2011-2017 թվականը ներառյալ արխիվային փաստաթղթերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
2. Չարենցավան համայնքի **«Մշակույթ»** համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2012-2015 թվականը ներառյալ արխիվային փաստաթղթերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
3. Չարենցավան համայնքի **«Մաքուր Չարենցավան»** համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2010-2020 թվականը ներառյալ արխիվային փաստաթղթերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
4. **«Ալափարսի մշակույթի տուն»** համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2015-2018 թվականը ներառյալ արխիվային փաստաթղթերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:


Կողմ- 9

դեմ-0

ձեռնպահ-0

Բաբայան Նարեկ 
Բաբայան Վալերի 
Գասպարյան Անատոլի 
Գասպարյան Մելիք 
Խլղաթյան Արսեն 
Սահակյան Երեմ 
Վարդանյան Նորայր 
Վարդանյան Սարգիս 
Փանոսյան Արթուր 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



Վ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 13

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆԵԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ- 9

դեմ-0

ձեռնպահ-0

Բարսյան Նարեկ

Բարսյան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ



**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:
2. Հանրային սննդի կազմակերպման սրահը պետք է հատուկ կահավորված լինի նախատեսված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար:
3. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովվող համապատասխան սարքավորումներով, ստուգաչափված չափման միջոցներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
4. Հանրային սննդի օբյեկտի մուտքի մոտ պետք է փակցված լինի ցուցանակ, որտեղ նշվում է կազմակերպության անվանումը, աշխատանքային ռեժիմը:
5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան գործունեության թույլտվություն:
6. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա ճաշացուցակ, որտեղ նշվում է կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակը, որը վաճառողի կողմից առաջարկվում է սպառողին (գնորդին)՝ մասնաբաժնի և գնի նշումով: Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:
7. Աշխատողներից՝ խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթություն կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

8. Սպասարկող անձնակազմի անդամները, որոնք անմիջապես առնչվում են սննդի հետ, պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ, աշխատանքային արտահագուստ, անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և զբաղեցրած պաշտոնի նշմամբ՝ վավերացված ձեռնարկության կնիքով:
9. Ուսումնական հաստատություններում, մանկական բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:
10. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցոնովի վաճառքը:
11. Ժամը 24:00-ից հետո աշխատող հանրային սննդի և զվարճանքի օբյեկտները պետք է ունենան պայմանագիր՝ ՀՀ Ոստիկանության պետական պահպանության բաժնի կամ անվտանգություն իրականացնող լիցենզավորված կազմակերպության հետ:
12. Ժամը 24-00-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտներում արգելվում է ակնհայտ 16 տարին չլրացած անձանց մուտքը:
13. Ժամը 24:00-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտների սրահի պատերը և պատուհանները պետք է լինեն ձայնամեկուսացված, որպեսզի ներսի աղմուկը չհարուցի շրջակա տարածքում բնակվող բնակիչների դժգոհությունը, , ինչպես նաև ձեռնարկեն համապատասխան միջոցներ ժամը 23:00-7:00-ն օբյեկտի գործունեության հետ կապված նաև օբյեկտից դուրս լռության պահպանման ուղղությամբ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«18» մարտի 2021 թվականի N 14

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի,

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 9

դեմ-0

ձեռնպահ-0

Բարսյան Նարեկ

Բարսյան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ՝ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

Չարենցավան համայնքի 2020 թվականի տարեկան վարչական բյուջեի եկամուտների ճշտված պլանը կազմել է 1143979.5 հազ. դրամ, փաստացին կազմել է 1109724.7 հազ. դրամ, կամ փաստացի պլանը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 97 % -ով:

Չարենցավան համայնքի 2019 թվականի տարեսկզբի վարչական բյուջեի եկամուտների ճշտված պլանը կազմել է 1073320.3 հազ. դրամ, փաստացին կազմել է 1035274.8 հազ. դրամ, կամ փաստացի պլանը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 96.5 % -ով:

Չարենցավան համայնքի 2018 թվականի վարչական բյուջեի տարեսկզբի եկամուտների ճշտված պլանը կազմել է 973709.1 հազ. դրամ, փաստացին կազմել է 927359.0 հազ. դրամ, կամ փաստացի պլանը տարվա ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 95.2 % -ով:

Համայնքի վարչական բյուջեի եկամուտների հավաքագրման 2020, 2019 և 2018 թվականների տվյալներից պարզվում է, որ 2020 թվականի վարչական բյուջեի եկամուտների փաստացի հավաքագրումը 2019 թվականի համեմատությամբ աճել է 74449,9 հազ. դրամով, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ աճել է 182365,7 հազ. դրամով:

Չարենցավան համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի տարեկան ճշտված պլանով սեփական եկամուտ է պլանավորվել 416366.3 հազ. դրամ, փաստացի եկամուտը կազմել է 382111.5 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 91.7%-ով:

Չարենցավան համայնքի 2019 թվականի վարչական բյուջեի ճշտված պլանով սեփական եկամուտ է պլանավորվել 491536.2 հազ. դրամ, փաստացի եկամուտը տարվա վերջում կազմել է 453655.7 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 92.3%-ով:

Չարենցավան համայնքի 2018 թվականի վարչական բյուջեի ճշտված պլանով սեփական եկամուտ է պլանավորվել 462478.5 հազ. դրամ, փաստացի եկամուտը կազմել է 416128.4 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 90%-ով:

Համայնքի վարչական բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման 2020, 2019 և 2018 թվականների տվյալներից պարզվում է, որ 2020 թվականի վարչական բյուջեի սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 71544.2 հազ. դրամով, 2018 թվականի համեմատությամբ՝ նվազել է 34016.9 հազ. դրամով:

2020 թվականի համայնքի վարչական տարածքում գտնվող **շենքերի և շինությունների գույքահարկի** եկամուտների գծով պլանավորած 62050.0 հազ. դրամի դիմաց տարեկան փաստացի եկամուտը կազմել է 60327.5 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 97.2%-ով, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ **գույքահարկ փոխադրամիջոցների** համար եկամտատեսակի գծով պլանավորած 119000.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 130314.7 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 109.5% -ով:

2019 թվականի ընթացքում համայնքի վարչական տարածքում գտնվող **շենքերի և շինությունների գույքահարկի** եկամուտների գծով պլանավորած 62050.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 63162.9 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 101.8%-ով, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ **գույքահարկ փոխադրամիջոցների** համար եկամտատեսակի գծով պլանավորած 101500.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 122829.9 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 121% -ով:

2018 թվականին համայնքի վարչական տարածքում գտնվող **շենքերի և շինությունների գույքահարկի** եկամուտների գծով պլանավորած 68375.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 54761.3 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 80.1%-ով, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ **գույքահարկ փոխադրամիջոցների** համար եկամտատեսակի գծով պլանավորած 86200.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 96473.2 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 111.9 % -ով:

Գույքահարկի հավաքագրման 2020, 2019 և 2018 թվականների բերված տվյալներից պարզվում է, որ 2020 թվականի գույքահարկի փաստացի հավաքագրումը՝ 190642.2 հազ. դրամ, 2019 թվականի գույքահարկի փաստացիի՝ 185992.8 հազ. դրամի համեմատությամբ աճել է 4649.4 հազ. դրամով, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ աճել է 39407.7 հազ. դրամով:

2020 թվականին համայնքի վարչական տարածքում գտնվող **հողի հարկի** գծով պլանավորած 46000.0 հազ. դրամի դիմաց եկամուտի փաստացին կազմել է 38054.4 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 82.7%-ով:

2019 թվականի ընթացքում համայնքի վարչական տարածքում գտնվող **հողի հարկի** գծով պլանավորած 46000.0 հազ. դրամի դիմաց եկամուտի փաստացին կազմել է 41017.5 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 89.2%-ով:

2018 թվականին համայնքի վարչական տարածքում գտնվող **հողի հարկի** գծով պլանավորած 51750.0 հազ. դրամի դիմաց եկամուտի փաստացին կազմել է 41886.5 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 81%-ով:

Հողի հարկի 2020, 2019 և 2018 թվականների տվյալներից երևում է, որ 2020 թվականի հողի հարկի փաստացի հավաքագրումը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 2963.1 հազ. դրամով, իսկ 2018 թվականի համեմատությամբ նվազել է 3832.1 հազ. դրամով:

2020 թվականի վարչական բյուջեի ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ՝ **տեղական տուրքեր** եկամտատեսակի գծով պլանավորած 14270.0 հազ. դրամի դիմաց տարեկան փաստացին կազմել է 12420.2 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 87% -ով:

2019 թվականի վարչական բյուջեի ընթացքում ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ՝ **տեղական տուրքեր** եկամտատեսակի գծով պլանավորած 14170.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 14412.3 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 101.7% -ով:

2018 թվականին վարչական բյուջեի ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ՝ **տեղական տուրքեր** եկամտատեսակի գծով պլանավորած 13106.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 13618.3 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 103.9% -ով:

Տեղական տուրքերի 2020, 2019 և 2018 թվականների բերված տվյալներից երևում է, որ 2020 թվականի տեղական տուրքի փաստացի հավաքագրումը 2019 թվականի համեմատ նվազել է 1992.1 հազ. դրամով, իսկ 2018 թվականի համեմատ՝ նվազել է 1198.1 հազ. դրամով:

2020 թվականին ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ՝ համայնքի բյուջե վճարվող **պեդագոգական տուրքեր** եկամտատեսակի գծով պլանավորած 6000.0 հազ. դրամի դիմաց տարեկան փաստացին կազմել է 5314.9 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 88.6% -ով:

2019 թվականի վարչական բյուջեի ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ՝ համայնքի բյուջե վճարվող **պեդագոգական տուրքեր** եկամտատեսակի գծով պլանավորած 6000.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 6447.3 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 107.5% -ով:

2018 թվականին վարչական բյուջեի ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ՝ համայնքի բյուջե վճարվող **պեդագոգական տուրքեր** եկամտատեսակի գծով պլանավորած 6500.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 5589.1 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 86% -ով:

Պետական տուրքի 2020, 2019 և 2018 թվականների բերված տվյալներից երևում է, որ 2020 թվականի փաստացի մուտքերը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 1132.4 հազ. դրամով, իսկ 2018 թվականի դրությամբ նվազել է 274.2 հազ. դրամով:

2020 թվականի վարչական բյուջեի **այլ եկամուտներ** եկամտատեսակի **գույքի վարձակալությունից** եկամուտների գծով պլանավորված 25584.0 հազ. դրամի դիմաց տարեկան փաստացին կազմել է 23413.4 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 91.5% -ով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով պլանավորված 21840.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի եկամուտը կազմել է 19645.3 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 89.9 %-ով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով փաստացին կազմել է 1148.7 հազ. դրամ:

2019 թվականի վարչական բյուջեի **այլ եկամուտներ** եկամտատեսակի համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով պլանավորված 21652.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացին կազմել է 22545.6 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 104.1 %-ով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով փաստացին կազմել է 1118.8 հազ. դրամ:

2018 թվականի ընթացքում համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով պլանավորված 21700.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի եկամուտը կազմել է 25269.9 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 116.5 %-ով:

Պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով պլանավորված 1900.0 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 1578.8 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է 83.1 %-ով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով բերված տվյալներից երևում է, որ 2020 թվականի մուտքերը 2019 թվականի համեմատությամբ աճել է 29.9 հազ. դրամով, 2018 թվականի համեմատությամբ նվազել է 430.1 հազ. դրամով: Համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարների գծով բերված տվյալներից երևում է, որ 2020 թվականի մուտքերը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 2900.3 հազ. դրամով, իսկ 2018 թվականի համեմատությամբ նվազել է 5624.6 հազ. դրամով:

ՀՀ-ում Բուլղարիայի դեսպանատան և Չարենցավանի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ, «Human Dignity and Peace - Armenia» հիմնադրամի և «Շենացնենք մեր գյուղը» ՀԿ-ի կողմից Բջնի գյուղում իրականացվել է «Բարի գալուստ օրգանական Կոտայք» դրամաշնորհային ծրագիրը: Այժմ Բջնի գյուղի մանկապարտեզը ունի օրգանական մշակությամբ վարվող ջերմոց, որը ոչ միայն առողջ և օրգանական սնունդ է մատակարարում մանկապարտեզի երեխաներին, այլև դարձել է նախադեպը չունեցող ուսումնական լաբորատորիա գյուղի և հարակից 4 համայնքների դպրոցահասակ երեխաների համար: Ծրագրի իրականացման համար 500,0 դրամ ֆինանսավորել է համայնքապետարանը

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի և Չարենցավանի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ իրականացվել են «Լուսաբաց» մանկապարտեզի մասնակի ջերմամեկուսացման աշխատանքները, ինչի արդյունքում փոխվել են մանկապարտեզի 1-ին մասնաշենքի ճակատային մասի 4 խմբասենյակի և խոհանոցի պատուհանները և դռները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3291,0, որից 791,0-ը տրամադրվել է համայնքապետարանի կողմից:

«ԷՊԱՄ Սիսթեմզ» ՍՊԸ-ն (EPAM Global) 2,400,000 (երկու միլիոն չորս հայտը հազար) ՀՀ դրամի չափով դրամական բարեգործական նվիրաբերություն է կատարել «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲ Ընկերությանը: Նվիրաբերությունն ստացած գումարով «Չարենցավանի բժշկական կենտրոնը» ձեռք է բերել անհրաժեշտ բժշկական պարագաներ:

2020 թվականի համաճարակային պայմաններից և պատերազմական իրավիճակից ելնելով, արտաքին կապերի ոլորտում իրականացվել են համագործակցություններ հետևյալ կազմակերպությունների հետ՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտե, «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման եվ բարեգործական միջազգային կազմակերպություն, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ, Դանիական բարեգործական ընկերություն, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր: Համագործակցության արդյունքում իրականացվել են անվճար խորհրդատվություններ (նաև հոգեբանական), հանդիպումներ, պարենային օգնություններ և համաֆինանսավորմամբ իրականացվելիք համայնքահեն ծրագեր:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացում» ծրագրի շրջանակներում արևային ֆոտովոլտային կայաններ են տեղադրվում համայնքային նշանակության շենքերի տանիքներում: 4740,0 դրամ համաֆինանսավորելու է համայնքապետարանը, որից 200,0-ը վճարվել է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«18» մարտի 2021 թվականի N 18

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Չարենցավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9

դեմ-0

ձեռնպահ-0

Բաբայան Նարեկ

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոդայքի մարզի Չարենցավան համայնքի
ավագանու 2021 թվականի մարտի 18- ի N 18 որոշման

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը կազմված է «Քաղաքաշինության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» 42-րդ հոդվածի համաձայն, Չարենցավան համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության առանձնահատուկ խնդիրները կանոնակարգելու նպատակով՝ քաղաքաշինության բնագավառի նորմատիվ-իրավական ակտերին համապատասխան:
2. Սույն կանոնադրության գործողությունը տարածվում է Չարենցավան համայնքի տարածքում գտնվող քաղաքաշինական գործունեության բոլոր օբյեկտների վրա՝ անկախ սեփականության իրավունքի սուբյեկտներից:
3. Եթե Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերի և /կամ/ Չարենցավան համայնքի/բնակավայրի/ գլխավոր հատակագծով սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների կանոնակարգման վերաբերյալ սահմանված են այլ նորմեր, ապա գործում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերով և/կամ/ գլխավոր հատակագծով սահմանված նորմերը:
4. Սույն կանոնադրությամբ սահմանված առանձին նորմերը համայնքի ավագանու որոշմամբ կարող են վերանայվել և փոփոխվել՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերով համապատասխան խնդիրների կանոնակարգման վերաբերյալ այլ նորմեր սահմանելու դեպքերում:

I. ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 22.1 -րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն Չարենցավան համայնքում ճարտարապետահատակագծային առաջադրանք տալիս է համայնքի ղեկավարը:
2. Առաջադրանք ստանալու համար կառուցապատողը համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտը՝ լրացված Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված ձևաթղթի համապատասխան:
3. Գոյություն ունեցող շենքում լրացուցիչ հարկ (այդ թվում մանսարդ) կառուցելու, կցակառույց կամ այլ բարելավում, վերափոխություն իրականացնելու համար նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին անհրաժեշտ է կցել շենքի կայունության, ամրության և հուսալիության վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը:
4. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող գույքի ձևափոխման նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին կցվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական լիազորված մարմնի համաձայնությունը կամ մասնագիտական եզրակացությունը:

5. Իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար առաջադրանքը տրամադրում է կամ մերժում՝ կառուցապատողի հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում, III կատեգորիայի օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում, իսկ մերժման դեպքում՝ նշում մերժման պատճառները, իսկ IV և V դիսկային օբյեկտների համար համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի:
6. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել իրավասու մարմնին:
7. Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և 10 օրվա ընթացքում կառուցապատողին տալիս առաջադրանք:
8. Հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

II. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՅՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շինարարության թույլտվություն պահանջող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերը համաձայնեցվում են համայնքի ղեկավարի հետ:
2. Համաձայնեցման ներկայացվող նախագծին կցվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմանը համապատասխան իրականացված փորձաքննության եզրակացությունը (բացառությամբ սահմանված դեպքերում և կարգով նախագծողի գրավոր երաշխավորագրով թողարկված նախագծերի):
3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, սահմանված դեպքերում կառուցապատողը պարտավոր է ապահովել նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության անցկացում, ներկայացնելով համապատասխան եզրակացություն՝ շրջակա բնական միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու և մեղմացնելու մասին:
4. Համաձայնեցման ներկայացվող նախագծի փաթեթում ներառվում է շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցը:
5. Նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են դրանք ներկայացնելու օրվանից՝
 - 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III դիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում.
 - 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V դիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում.
6. Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են, դրանք կրկին ներկայացվելու են համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ՝ 1) սահմանված ժամկետում:

III. ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի ,Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշմամբ:
2. Ոչ հիմնական շինությունների նախագծային փաստաթղթերը մշակվում են հողամասի տրամադրման մասին որոշման հիման վրա, որով ամրագրվում են շինությունների տարածական չափերը, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանները, ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները՝ ելնելով տեղանքի և (կամ) օբյեկտի առանձնահատկությունից:
3. Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ նրա կողմից համաձայնեցված և պատվիրատուի կողմից հաստատված նախագծի հիման վրա:

IV. ՇԵՆՔԵՐԻ, ՉԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժտված անձը:
2. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի ,Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշմամբ սահմանված կարգով՝ պատվիրատուի հայտի հիման վրա Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

V. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող: Կառուցապատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, ,Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ փաստաթղթերով:
2. Չարենցավան համայնքում շինարարություն իրականացնելիս շրջակա միջավայրի անվտանգության, սանիտարական պաշտպանության, կառուցապատվող հողերի պահպանության խնդիրներն ապահովելու նպատակով, կառուցապատողը պարտավոր է կատարել հետևյալ կանոնները.

- 1) Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղբը համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր:
- 2) Փողոցներին հարող հողամասերում կառուցապատում իրականացնելիս մայթերը ժամանակավոր սարքավորել անվտանգ հետիոտն շարժումն ապահովելու համար անհրաժեշտ հարթակներով, բազրիքներով ու ծածկոցներով:

VI. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿՃԱՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերը, ըստ օգտագործման բնույթի, կառուցապատման իրավունքով կարող են տրամադրել հետևյալ ժամկետներով՝
 - ա/ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման բակային տարածքներում ավտոտնակների տեղադրման համար՝ մինչև 30 տարի ժամկետով, հասարակական նշանակության կառույցների տեղադրման համար՝ մինչև 49 տարի ժամկետով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ մինչև 20 տարի ժամկետով:
 - բ/ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում /զբոսայգի, պուրակ/ հասարակական նշանակության/կրպակ, մանկական սրճարան-տաղավար, խաղասրահ, ատրակցիոն/ օբյեկտների տեղադրման համար մինչև 20 տարի ժամկետով:
2. Կառուցապատման իրավունքի տրամադրման համար վճարները սահմանվում են համայնքի ավագանու կողմից:

VII. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:
2. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և իրավական այլ ակտերով:

**VIII. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԸ**

1. Չարենցավան համայնքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունն իրականացվում է, Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի, Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին թիվ 660 որոշման համաձայն և սույն կարգով:
2. Չարենցավան համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին հասարակայնությանն իրազեկում է համայնքի ղեկավարը:
3. Իրազեկումն իրականացվում է.
 - 1) համայնքային էլեկտրոնային կայք-էջում տեղադրմամբ.
 - 2) հասարակական քննարկումներով:
4. Հասարակայնության ներկայացուցիչները սահմանված ժամկետում նորմատիվ և այլ իրավական ակտերով հիմնավորված դիտողությունները, առաջարկությունները, ինչպես նաև հրապարակված նախագծերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եզրակացությունները գրավոր ներկայացնում են համայնքապետարանի աշխատակազմին:
5. Համայնքի ղեկավարը հասարակայնության ներկայացուցիչների (դիտողությունների և առաջարկությունների հեղինակների) մասնակցությամբ դիտողությունների ու առաջարկությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից հետո 3-օրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին:

**IX. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ԿԱՐԳԸ**

1. Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:
2. Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:
3. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները) եթե դրանք չեն

խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և (կամ) չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես նախագծով որոշված տարածքի սահմաններում:
5. Շինարարության (քանդման) թույլտվությունը Չարենցավան համայնքում տալիս է համայնքի ղեկավարը ,Քաղաքաշինության մասին և Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի ,Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին թիվ 596 որոշմամբ սահմանված կարգով:
6. Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո՝ ,Քաղաքաշինության մասին և Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ,Ժե կետով նախատեսված ժամկետով:
7. Շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել օրենքով սահմանված կարգով:
8. Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանց հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում համաձայնեցնող մարմնին:
9. Չարենցավան համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե:
10. Թույլտվության տեսակներն են՝
 - 1) նոր կառուցվող օբյեկտների, շենքերի և շինությունների, շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման թույլտվությունը,
 - 2) գոյություն ունեցող օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման աշխատանքների կատարման թույլտվությունը,
 - 3) գոյություն ունեցող օբյեկտների քանդման թույլտվությունը:
11. Կառուցապատողը շինարարության թույլտվություն ստանալու համար համայնքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝ 1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված ձև N 1), 2) օբյեկտի շինարարության համար՝ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերը, որտեղ նշվում են շինարարության տևողության ժամկետը, իսկ փուլերով մշակվող նախագծի դեպքում՝ միջանկյալ հաստատվող փուլի նախագծային փաստաթղթերը:
12. Դիմումում նշվում են՝
 - 1) օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,
 - 2) օրենքով սահմանված դեպքերում՝ օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակած և սահմանված կարգով փորձաքննություն անցկացրած տնտեսավարող սուբյեկտները՝ համապատասխան գործունեության իրականացման լիցենզիաների համարներով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի երաշխավորագիրը:
13. Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղբը համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր:
14. Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

15. Սեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը քանդման թույլտվություն ստանալու համար համայնքապետարան է ներկայացրում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված ձև N 2),

2) անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը և սեփականատիրոջ կողմից սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը):

16. Դիմումում նշվում են՝

1) քանդվող օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,

2) քանդման նպատակը,

3) քանդվող օբյեկտի հիմնական ցուցանիշները:

17. Թույլտվություն տվող իրավասու մարմինը կառուցապատողի (սեփականատիրոջ) ներկայացրած փաստաթղթերը քննարկում է և ընդունում որոշում թույլտվության կամ մերժման մասին՝ դիմում տալու օրվանից ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում:

18. Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված ձևերի:

19. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյան, որը դրոշմակնքում է թույլտվություն տվող իրավասու մարմինը:

20. Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարության իրականացում հնարավոր չէ առանց գոյություն ունեցող օբյեկտի (օբյեկտների) քանդման, ապա սեփականատիրոջը տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, հանդիսանում է նաև քանդման թույլտվություն:

21. Օբյեկտի փաստացի քանդումն ու նոր շինարարությունն իրականացվում են շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված հերթականությամբ:

22. Այն դեպքում, երբ տեղանքի ճարտարագիտական ուսումնասիրություններն առանց քանդման անհնարին են, ապա քանդման թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ միաժամանակ՝ մինչև շինարարության թույլտվություն ստանալը, քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո:

23. Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում, և (կամ) հաջորդ աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն՝ ապա սեփականատիրոջը տրվում է քանդման թույլտվություն:

24. Համայնքի ղեկավարը տալիս է թույլտվություն կամ այն մերժում է (գրավոր իրազեկելով մերժման հիմքերի մասին) դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում:

25. Կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է ոչ ավելի, քան՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 7-օրյա ժամկետում:

26. Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվության տրամադրման կամ վերջինիս մերժման մասին կառուցապատողը տեղեկացվում է դիմումում նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով:

27. Թույլտվության ձևակերպման օրվանից 2 տարվա ընթացքում թույլտվությամբ նախատեսված աշխատանքները չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել թույլտվություն տվող իրավասու մարմնին՝ կառուցապատման տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ և սույն կարգի համաձայն նոր թույլտվություն ստանալու համար:

28. Կառուցապատողը շինարարական (քանդման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ տեղեկացնում է Չարենցավանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված N 5 ձևի, եթե թույլտվությամբ այլ ժամկետ նախատեսված չէ:

29. Կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է 5-օրյա ժամկետում՝ սույն կարգի 28-րդ կետում նշված մարմիններին տեղեկացնել շինարարության թույլտվության և (կամ) N 5 ձևում նշված համապատասխան տեղեկանքի տվյալների փոփոխման մասին:

30. Նախագծային լուծումների՝ սահմանված կարգով փոփոխման դեպքում շինարարության թույլտվության մեջ կատարվում է գրառում:

X ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Չարենցավան համայնքում շինարարության ավարտը փաստագրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի ,Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին՝ թիվ 626-Ն որոշմամբ սահմանված կարգով, նույն որոշմամբ հաստատված ձևի շինարարության շահագործման ակտի ձևակերպմամբ, նախագծով նախատեսված շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացումից հետո:
2. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:
3. Դիմումին կցվում են՝
 - 1) ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկկողմանի ակտը.
 - 2) երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները.
 - 3) կատարողական փաստաթղթերի ցանկը.
 - 4) ակտի ձևակերպման համար ,Տեղական տուրքերի և վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:
4. Համայնքի ղեկավարը ներկայացված փաստաթղթերի հիման վրա ձևակերպում է շահագործման ակտը՝ դիմումն ստանալու օրվանից՝
 - 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III դիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.
 - 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V դիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:
5. Կառուցապատողի ցանկությամբ ավարտական ակտը կարող է ձևակերպվել առանց նախագծով նախատեսված այնպիսի աշխատանքների իրականացման, որոնց համար ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված կարգի չի պահանջվում շինարարության թույլտվություն:

6. Ինքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա է փաստագրման:

7. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետներում գրավոր տեղեկացնում է դիմողին՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կարգի 3-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

8. Իրավասու մարմնի առաջադրած պահանջները բավարարվելու դեպքում շահագործման ակտը ձևակերպվում է կառուցապատողի կրկնակի դիմումը տալու օրվանից եռօրյա ժամկետում:

9. Շահագործման ակտը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մնում է համայնքապետարանում, մեկական օրինակ տրվում է կառուցապատողին, կապալառուին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարմնին:

XI ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկում է համայնքի վարչական տարածքում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն համայնքի ղեկավարը քննում է շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ, շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատումը չավարտելու վերաբերյալ գործերը:

XII ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

1. Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի ,Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին թիվ 802 որոշմամբ սահմանված կարգով և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը Չարենցավան համայնքում կատարում է համայնքի ղեկավարը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«18» մարտի 2021 թվականի N 19

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝


ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.


1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:


Կողմ-9


դեմ-0


ձեռնպահ-0


Բաբայան Նարեկ 


Բաբայան Վալերի 


Գասպարյան Անատոլի 


Գասպարյան Մելիք 

Խլղաթյան Արսեն 

Սահակյան Երեմ 

Վարդանյան Նորայր 

Վարդանյան Սարգիս 

Փանոսյան Արթուր 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ





ՀԱՐԵՆՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), ծածկագիրը	Մակերեսը քառ.մ	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ բառմանափա կում-ների (ներառյալ սեղծվ (ներառյալ սեղծվ իտուտների) արկայությունը	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ազդող տեխնիկական պայմանները, հողատեսքը*	Հողամասի տրամադրման եղանակները	Մեկնարկային գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Համայնք Չարենցական գ. Կարենիս հողամաս 07-037-0206-0079	7307,5	Գյուղատնտեսական	Գյուղ նպատակով	չկա	Վարելահող	Աճուրդ	1 610 000 դրամ
1	Ք. Չարենցական գյուղ Արզական հողամաս 07-015-0050-0058	7618	Գյուղատնտեսական	Գյուղատնտեսական նպատակով	չկա	այլ	Աճուրդ	600000 դրամ
3.	Համայնք Չարենցական գ. Արզական հողամաս 07-015-0071-0083	8547,2	Գյուղատնտեսական	Գյուղատնտեսական նպատակով	չկա	այլ	Աճուրդ	80000 դրամ
4.	Համայնք Չարենցական գ. Արզական հողամաս 07-015-0103-0108	730	Գյուղատնտեսական	Գյուղատնտեսական նպատակով	չկա	Այլ հողատեսք	Աճուրդ	40000 դրամ
5.	Ք. Չարենցական Ե. Չարենցի փ.1/8 հողամաս 07-007-0054-0401	120	Բնակավայրերի	Բնակավայրացայատման	չկա		Աճուրդ	540000 դրամ
6.	Ք. Չարենցական Հոկտեմբերյան փող.1/4 07-007-0042-0003	144	Բնակավայրերի	Հաս. Կառուցապատման	չկա		Աճուրդ	435000 դրամ
7.	Ք. Չարենցական Շահումյան փող. 49/3 հողամաս 07-007-0005-0026	200	Բնակավայրերի	Կառուցապատման	չկա		Աճուրդ	600000 դրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«18» մարտի 2021 թվականի N 20

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքով օտարելու համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9

դեմ-0

ձեռնպահ-0

Բաբայան Նարեկ

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ





ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՏԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը քառ.մ	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ բաժանմանափա կում-ների (ներառյալ սերով խոտունների) առկայությունը	Գյուղատնտեսական հողերի թեքքում՝ հողի որակական հատկանիշները, ագրո տեխնիկական պայմանները, հողատեսքը*	Հողամասի տրամադրման երանախները	Մեկնարկային գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Ք. Չարենցավան Բանջյան փող.թիվ. 9/2 հողամաս 07-007-0050-0346	34,1	Բնակավայրերի	Բնակելի Կառուցապատ ման	չկա	-----	Ուղղակի	152000 դրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2021 թվականի N 21

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության ու կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9

դեմ-0

ձեռնպահ-0

Բարբայան Նարեկ

Բարբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Հավելված
 Չարենցավան համայնքի ավագանու
 2021 թվականի մարտի
 18-ի N 21 որոշման



ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՌԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԵ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը քառ.մ	Հողամասի նախատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ բառնանափա կումների (ներառյալ սերով խողտների) ատկայությունը	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրո տեխնիկական պայմանները, հողատեսքը*	Հողամասի տրամադրման երանանկները	Մեկնարկային գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ք. Չարենցավան գյուղ Բջնի 5-րդ փող. 1/1 հողամաս 07-019-0020-0090	3000	բնակավայրերի	Կառուցապատ ման	չկա	-	Վարձակալություն	200000 դրամ
2.	Համայնք Չարենցավան գ. Բջնի 1-ին փող. 15/7 հողամաս 07-019-0072-0029	100	Ջրային	Կառուցապատ ման	չկա	-----	Կառուցապատում	35 000 դրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«18» մարտի 2021 թվականի N 22

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների:

Ը/Ը	ԱՋԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅՎԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Մելիքյան Վարուժան	4-10-36	9 490 000	Սեփականություն	Անհատույց
2.	Ջոմյան Ազատուհի	1Ա-2-1	12 850 000	Սեփականություն	Անհատույց
3.	Թորոսյան Էդվարդ	3-1-34	1 620 000	Սեփականություն	Անհատույց
4.	Թորոսյան Էդվարդ	3-1-35	1 690 000	Սեփականություն	Անհատույց
5.	Ազիզյան Գևորգ	2-5-4	8 450 000	Սեփականություն	Անհատույց










2. Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9

դեմ-0

ձեռնպահ-0

Բաբայան Նարեկ 
Բաբայան Վալերի 
Գասպարյան Անատոլի 
Գասպարյան Մելիք 
Խլղաթյան Արսեն 
Սահակյան Երեմ 
Վարդանյան Նորայր 
Վարդանյան Սարգիս 
Փանոսյան Արթուր 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



Վ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ